	«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը <<Հայոց լեզու և գրականություն>> առարկայի ընթացքում:

Առարկան՝ <<Հայոց լեզու և գրականություն>>

Հետազոտող ուսուցիչ՝ Զավարյան Նարա

Ուսումնական հաստատություն՝ Օձունի թիվ 1 միջնակարգ դպրոց

Երևան 2022

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ **2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մեջ ինքնուրույնության,նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումն առարկայի դասավանդման ընթացքում

Հեղինակ՝ Ձավարյան Նարա

Մարզ՝ Լոռի

Ուսումնական հաստատություն՝ Օձունի թիվ **1** միջնակարգ դպրոց

Բովանդակություն

1.Նախաբան։Հետազոտության նպատակները,խնդիրները,արդիականությունը...2-5

2.Աշխատանքի բովանդակությունը.....5-13

3.Եզրակացություն.....14-15

4.Օգտագործված գրականության ցանկ.....16

Բովանդակություն

1.Ներածություն։ Հետազոտության նպատակները,խնդիրները։

2.Սովորողների մեջ ինքնուրույնության ,նախաձեռնության զարգացումն առարկայի դասավանդման ընթացքում։

3. Սովորողների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացումն առարկայի դասավանդման ընթացքում։

4.Եզրակացություն։

5.Օգտագործված գրականության ցանկ։

1.Ներածություն: Հետազոտության նպատակները,խնդիրները:

Ի՞նչ ենք հասկանում<<ինքնուրույնություն>>, <<նախաձեռնություն>>, <<ստեղծագործական ունակություններ>> ասելով:Ի՞նչ նպատակ է հետապնդում հետազոտությունը:

Աշխատանքի նպատակն է ՝ ներկայացնել,թե ինչ ենք հասկանում <<ինքնուրույնություն>>, <<նախաձեռնություն>>, <<ստեղծագործական ունակություններ>> ասելով,ինչպես նաև ցույց տալ այս կարողությունների ձևավորման ու զարգացման ուղիները:

Այսօր առավել,քան երբևէ, կարևոր է սեփական անձի հնարավորությունների և կարողությունների գիտակցումը :Այս առումով կարևորում ենք հոգեբանական աջակցումն ու խթանումը ավելի վաղ՝ դեռահասության տարիքում, ինչը հնարավոր է իրականացնել համապատասխան տեղեկատվության լայնածավալ կիրառմամբ և դեռահասների շրջանում հոգեբանական ինքնաճանաչման, ինքնագիտակցման ձևավորման և զարգացման ճանապարհով: Դեռահասի պատկերացումներն ու երազանքները որոշակի համակրանք, հրապուրանք են ձևավորում կոնկրետ մասնագիտության հանդեպ, իսկ արդեն պատանեկան տարիքում դրանք նախահիմք են դառնում արժեհամակարգի համար: Հանրակրթական հաստատություններն այսօր նոր պահանջներ են առաջացնում ապագա երիտասարդների համար:Դրանցից կարևոր է ինքնուրույնության ձևավորումը սովորողների մեջ:Կրթական հաստատությունը պետք է սովորողին ապահովի ոչ միայն գիտելիքներով, այլև այս կամ այն երևույթի մասին գործնականում ինքնուրույն վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու փորձառությամբ:Ինքնուրույնության համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն:

Արդյո՞ք աշակերտների մտածողությունը զարգանում է ուսուցման պրոցեսում, եթե նրանք կարողանում են ինքնուրույնաբար իմացական խնդիրներ լուծել, ելք գտնել պրոբլեմային իրավիճակներում: Տարիքի հետ զուգընթաց զարգանում է սեփական գործունեությունը պլանավորելու և այդ պլանն իրականացնելու ունակություն: Այդ առանձնահատկությունները դրսևորվում են նաև երեխաների ուսումնական գործունեության մեջ: Որոշ երեխաներ ուսումնական առաջադրանքներ կատարելիս ուշադրություն են դարձնում տարրերի վրա, բայց դրանք չեն կապում միմյանց հետ: Ուրիշները գործողության եղանակները ընտրում են, ելնելով այն բանից, թե ամբողջությամբ վերցրած ինչպես են հասկանում խնդիրը, նրա կապերը ուսումնական այլ նյութերի հետ և այլն:Այս ամենի արդյունքում երեխաների մոտ ձևավորվում է նախաձեռնողականություն: Անձի այնպիսի ընդհանուր գծերի ձևավորումն ու զարգացումը, ինչ-պիսիք են նպատակասլացությունը,

կազմակերպվածությունը, կանխամտածվածությունը նույնպես հատուկ ջանքեր են պահանջում: Անհրաժեշտ է, որպեսզի երեխաները տիրապետեն իրենց գործունեությունը կազմակերպելու միջոցներին: Նրանց սովորեցնում են առանձնացնել գործունեության որոշակի փուլեր՝ պլանավորումը, նախապատրաստումը, իրագործումը, վերահսկողությունն ու գնահատումը:

Նախաձեռնության ձևավորումը շատ բարդ պրոցես է և շոշափում է երեխայի անձի տարբեր կողմեր: Մի կողմից երեխաներին պետք է սովորեցնել իրենց կատարած առանձին գործողությունները համադրել նպատակի, ապագա արդյունքի, գործունեության պահանջվող արգասիքի հետ, պետք է սովորեցնել փոխել, վերակառուցել գործողությունները՝ կախված նպատակի, խնդրի փոփոխությունից: Մյուս կողմից, երեխաներից ոչ միայն պետք է պահանջել, որ նրանք որոշակի արդյունք ստանան, գործունեությունը հասցնեն մինչև վերջ, հաշվի առնեն առաջադրված պահանջները, այլև նրանց համար պեյտք է հատկապես առանձնացնել ստացված արդյունքը, այն վերլուծության ենթարկել նպատակի ու խնդրի տեսանկյունից, մատնացույց անել լավագույն արդյունքներ ձեռք բերած երեխաներին:

Ստեղծագործելու էությունը կայանում է առկա փորձի վերափոխման ,դրա հիման վրա նոր համադրությունների կառուցման մեջ: Ստեղծագործական կարողությունները նպաստում են յուրօրինակ մտքերի համախմբմանն ու նոր մտքերի ստեղծման գործընթացին՝ օգնելով գտնել առաջացած խնդիրների և դժվարությունների համար նոր, յուրօրինակ մոտեցումներ և լուծումներ: Ստեղծագործական գործունեության մեթոդիկաներն օգնում են ավելի հստակ ձևակերպել խնդիրները, արագացնում են նոր գաղափարներ գտնելու գործընթացը, ինչպես նաև ավելացնում են դրանց քանակը, լայնացնում են խնդիրների վերաբերյալ արդեն եղած տեսակետները և ոչնչացնում իմացական արգելքները: Գոյություն ունեն ստեղծարարության մեթոդիկաների ինչպես անհատական, այնպես էլ խմբով կամ զույգերով աշխատելու ձևեր:Ստեղծագործական կարողությունների ձեռքբերման համար անհրաժեշտ են՝

1.Խնդրի հստակ ձևակերպում

2.Ելքային տվյալների հավաքագրում

3.Ելքային տվյալների կառուցակարգման համար չափորոշիչների մշակում

4.Կառուցակարգել ելքային տվյալները

5.Բազմակողմանիորեն ուսումնասիրել ելքային տվյալները

6.Լայնացնել խնդրահարույց իրավիճակի ենթաձյուղերը

7.Խնդրի վերաբերյալ մի քանի տեսակետ մշակել

8.Առաջ քաշել հնարավոր լուծումների առավելագույն քանակ

9.Մշակել առավել հնարավոր լուծումներից ընտրություն կատարելու սկզբունք

10.Հանել մտավոր արգելքները

11.Արագացնել մտքերի գեներացման գործընթացը

12.Դուրս բերել իսկապես արդյունավետ ու յուրօրինակ լուծումներ։

Այսպիսով,վերը նշվածից եզրակացնում ենք,որ սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն, ստեղծագործական ունակություններ զարգացնելու համար անհրաժեշտ է համակողմանի աշխատանք իրականացնել։Այդ կարողությունների ձևավորումը պետք է սկսել վաղ տարիքից և աստիճանաբար ընդլայնել՝ելնելով տարիքային,առարկայական պահանջներից։

2.Սովորողների մեջ ինքնուրույնության ,նախաձեռնության զարգացումն առարկայի դասավանդման ընթացքում։

Չնայած բազմաթիվ մշակված հարցերին,ինքնուրույնության հմտությունների զարգացման խնդիրը դեռևս արդիական է։ Ժամանակակից աշխարհի պայմաններում այն ավելի քան երբևէ ակտուալ է, քանի որ ներառում է դպրոցականների ոչ միայն անձնային զարգացման և նրանց անկախության ձևավորման, այլև մատաղ սերնդի ստեղծագործական դաստիարակության խնդիրները։

Որո՞նք են սովորողների ինքնուրույնության զարգացման մակարդակները։

Դրանք են՝

1.Սովորողների գործողությունների պատճենում ըստ տրված օրինաչափության, առարկաների և երևույթների նույնականացում, դրանց ճանաչում՝ համեմատելով հայտնի օրինաչափության հետ: Այս մակարդակում սովորողները պատրաստվում են ինքնուրույն գործունեության:

2. Կրթական տեղեկատվության վերարտադրման գործունեություն, որը չի անցնում հիշողության մակարդակի սահմաններից: Այս մակարդակում տեղի է ունենում ճանաչողական գործունեության տեխնիկայի և մեթոդների ընդհանրացում, դրանց տեղափոխում ավելի բարդ, բայց դեռ բնորոշ խնդիրների լուծմանը:

3. Ձեռք բերված գիտելիքների ինքնուրույն կիրառման արդյունավետ գործունեություն։Այս փուլում ինքնուրույն գործունեությունն աշակերտից պահանջում է եզրակացություններ անելու կարողություն, ինչպես նաև ստեղծագործական տարրեր:

4. Անկախ գործունեություն գիտելիքների փոխանցման վերաբերյալ բոլորովին նոր իրավիճակներում խնդիրներ լուծելիս, որոշումների կայացման, նոր ծրագրերի պատրաստման պայմանների զարգացում:[1]

Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում: Մանկության տարիներին ազատ և դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել, հետևել նրա ընտրության սկզբնական քայլերին, սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական ընտրության համար: Ավելի ուշ, դպրոցական տարիքում առավել կարևորվում է գիտելիքը, իմացությունը, ինչը թելադրվում է մեծի կողմից, և այս առումով ինքնուրույնության խթանումը զուգահեռ դժվար է իրականացնել: Սեփական անձի հետաքրքրությունների և ապագա մասնագիտության սկզբնական ինքնորոշման քայլերը կարող են իրականանալ վաղ դեռահասության տարիքում: Եթե տեղեկացվածությունը, մասնագիտությունների

1.Տե՛ս Նեմով Ռ.Ս., Հոգեբանություն, Գիրք 2 ,1998,608 էջ:

մասին պատկերացումները բավարար լինեն ինքնորոշման համար, ապա ուսումնական հաստատություններում սովորողները կարող են ինքնուրույն կողմնորոշվել սպասվող հոսքային ընտրության համար, այսինքն կայացնել որոշում՝ որպես ապագա մասնագետ:

Կ.Դ. Ուշինսկին գրել է, որ երեխաները պետք է ինքնուրույն աշխատեն, իսկ ուսուցիչը պետք է ղեկավարի այս անկախ աշխատանքը և նյութ տրամադրի նրան: Նա հիմնավորել է դասարանում սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման որոշ ուղիներ ու միջոցներ՝ հաշվի առնելով ուսուցման տարիքային շրջանները,լուծել է ուսումնական գործընթացում սովորողների անկախության խնդիրը:

Ուսուցիչը պիտի իրականացնի նպատակաուղղված մանկավարժական գործընթաց՝ սովորողների ակտիվ կրթական և ճանաչողական գործունեության կազմակերպման և խթանման համար՝ տիրապետելու գիտական գիտելիքներին, հմտություններին և կարողություններին, զարգացնելու ստեղծագործական կարողությունները, աշխարհայացքը, բարոյական և գեղագիտական հայացքներն ու համոզմունքները:

Մանկավարժական գործընթացում զգալի տեղ են գրավում ինքնուրույնության զարգացման մեթոդները, ինչը բազմիցս ընդգծել են անցյալի հայտնի ուսուցիչները: Կ.Դ. Ուշինսկին պնդում էր, որ միայն ինքնուրույն աշխատանքը պայմաններ է ստեղծում սովորողների մտածողության խորը տիրապետման և զարգացման համար, իսկ Պ.Ֆ. Կապտերևն ասում էր, որ դպրոցը բարելավելու յուրաքանչյուր նոր քայլ ինքնակրթության սկզբունքների կիրառումն է երիտասարդների դպրոցական կրթության մեջ: Հայոց լեզվի և գրականության դասաժամերին դա կարելի է իրականացնել շարադրությունների,ինքնուրույն վերլուծություններ կատարելու միջոցով:Սովորողներն արդյունքում գիտակցաբար ձգտում են հասնել առաջադրանքում դրված նպատակին՝ ցույց տալով իրենց ջանքերը և այս կամ այն

ձևով բացահայտելով իրենց մտավոր կամ ֆիզիկական գործողությունների արդյունքները:Նմուշի վրա անկախ աշխատանքը սովորողները կատարում են մանրամասն հրահանգների հիման վրա, ինչի պատճառով նրանց ճանաչողական գործունեության և անկախության մակարդակն այս դեպքում դուրս չի գալիս վերարտադրողական գործունեության շրջանակներից: Այսպես, օրինակ, հայոց լեզվի դասերին սովորողներին ներկայացվում են մի քանի նախադասություններ, և նրանք պետք է ինքնուրույն որոշեն, թե որտեղ են ճիշտ դրված կետադրական նշանները, կամ գրատախտակին գրված են մի քանի բառ նույն քերականական կանոնի համար, և սովորողները պետք է գտնեն ճիշտ և սխալ գրված բառեր, կամ պետք է գտնել օրինակներ, որոնք հաստատում են որոշակի քերականական կանոնը: Գրականության դասաժամին կարելի է հանձնարարել կազմել բանավոր պատմություն ասացվածքներով և առածներով:Սովորողների ճանաչողական ակտիվությունն ու անկախությունն արտահայտվում են խնդրահարույց իրավիճակի վերլուծության ժամանակ նրանց կողմից արված ընդհանրացումներով, էականը երկրորդականից առանձնացնելու և համապատասխան խնդրի լուծման շրջանակներում լուծում գտնելու մեջ:

Ստեղծագործական անկախ աշխատանքները սովորողների ճանաչողական գործունեության և ինքնուրույնության ամենաբարձր մակարդակն են արտահայտում:Այս տիպի աշխատանքներում արդեն ենթադրվում է, որ սովորողն անմիջականորեն կմասնակցի իր համար սկզբունքորեն նոր գիտելիքների՝ նյութական և հոգևոր մշակույթի արժեքների արտադրությանը: Ստեղծագործական աշխատանքի բոլոր տեսակների առաջադրանքները պարունակում են պայմաններ, որոնք խթանում են խնդրահարույց իրավիճակների առաջացումը, որոնք դասի ընթացքում կարող են ստեղծվել տարբեր ձևերով: Սովորողների ինքնուրույն աշխատանքը պահանջում է ինտենսիվ մտածողություն, տարբեր ճանաչողական առաջադրանքների լուծում, նշումներ կատարելը, ուսումնական տեղեկատվության ըմբռնումն ու մտապահումը և այլն:Անկախ աշխատանքի արդյունավետությունը

կախված է բազմաթիվ արտաքին և ներքին գործոններից՝ դրա առաջադրանքների

բովանդակությունից և բարդությունից, ավագ ընկերների առաջնորդությունից, գիտելիքների մակարդակից և ընդհանուր զարգացումից, նրանց ինտելեկտուալ գիտելիքներից և հմտություններից, շարժառիթներից և վերաբերմունքից, մեթոդներից և տեխնիկայից:Սովորողների անկախ աշխատանքի արդյունավետության կենտրոնական պայմանը դրա նպատակների և մեթոդների խորը գիտակցումն է, սեփական անձի գիտակցումը որպես անձի, ով ինքն է ղեկավարում, կազմակերպում և վերահսկում ուսումնական գործընթացը: Ուսուցիչը պետք է լուրջ ուշադրություն դարձնի ինքնուրույնության ձևավորման գործընթացում նոր գիտելիքներն ինքնուրույն ընկալելու և յուրացնելու սովորողների կարողությունների զարգացմանը: Այս հմտությունների զարգացման ողջ գործընթացը պետք է սկսել արվեստի փոքր ստեղծագործությունների ինքնուրույն ընթերցմամբ, այնուհետև գիտահանրամատչելի հոդվածներով, որին կհաջորդի վերապատմումը կամ սովորողների հարցերի պատասխանները: Սովորողների մեջ նախաձեռնողականության ձևավորումը հնարավոր է բազմաթիվ իրավիճակներում:Դրա միջոցով սովորողն արտահայտում է սեփական կարծիքը և կատարում գործողություններ: Գրականության դասաժամին նախաձեռնողականություն ձևավորելու համար կարելի է դիմել տարբեր մեթոդների ու հնարների:Կարելի է գրական երկի հանգույցի շուրջ քննարկումներ կազմակերպել,գրական կերպարների՝ տարբեր իրավիճակներից ելք գտնելու շուրջ իրենց կարծիքներն ու տարբերակներն առաջադրել:

Այսպիսով,եկանք եզրակացության, որ ուսուցումն ուսուցչի և սովորողների միջև փոխգործակցության գործընթացի կազմակերպման բարդ ձև է, որն ուղղված է որոշակի կրթական նպատակների իրականացմանը: Ուսուցումը ակտիվ գործընթաց է, որի ընթացքում ուսուցիչը և սովորողը փոխազդում են: Ուսուցման գործընթացում զգալի տեղ է զբաղեցնում ինքնուրույնության և նախաձեռնողականության ձևավորման աշխատանքը, որպես գործունեություն, որն իրականացվում է առանց ուսուցչի անմիջական մասնակցության, բայց նրա հանձնարարությամբ՝ դրա համար հատուկ հատկացված ժամանակում: Այն սովորողների անձնական ստեղծագործական ձևավորման և զարգացման պայման է:

3. Սովորողների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացումն առարկայի դասավանդման ընթացքում։

Որո՞նք են երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման համար անհարժեշտ պայմանները։Կրթության և դաստիարակության գործընթացում ստեղծագործ անհատականության զարգացումը ժամանակակից հասարակության սոցիալապես կարևոր խնդիրներից մեկն է: Որպես կրթության բարձրագույն նպատակ է սահմանվում ինքնազարգացող և ինքնորոշող անհատականության ձևավորումը, որն ունակ է բաց ստեղծագործական փոխազդեցության միջավայրի և հասարակության հետ: Մանկավարժական գիտությունը կենտրոնական խնդիրներից է համարում կրթության ազդեցությունը անհատի ստեղծագործական զարգացման վրա։ Ներկայումս մանկավարժական գիտության առաջնահերթ խնդիրներից է անհատի և հասարակության միջև որակապես նոր հարաբերությունների ուսումնասիրությունը, երեխաների կրթության, ուսուցման և ստեղծագործական զարգացման առավել օպտիմալ ուղիների որոնումը։Անհատականության զարգացման համար առանձնահատուկ նշանակություն ունեն նախադպրոցական և տարրական դպրոցական տարիքը, երբ դրվում է անհատականության հիմքը, ձևավորվում են սովորություններ, զարգանում են ճանաչողական կարողություններ, ձևավորվում են բազմազան հարաբերություններ արտաքին աշխարհի հետ։ Կրթության մեջ էական վերափոխումներ են տեղի ունենում, փոխվում են ոչ միայն նրա անհատական կողմերը, այլև ընդհանուր հայեցակարգային մոտեցումները։ Երեխայի անհատականության ստեղծագործական զարգացման հիմնախնդիրը լուծելու արդյունավետ միջոցներից մեկը հիմնական և լրացուցիչ կրթության ինտեգրումն է, անհատականության վրա հիմնված, անհատական գործունեության մոտեցումների ներդրումը, որոնք կարող են էական դեր խաղալ երեխայի կյանքում։ Նրա ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստելու համար անհրաժեշտ է պայմաններ ստեղծել երեխայի ստեղծագործական գործունեության փորձի ձևավորման համար, ապահովել ընտանիքի դրական վերաբերմունքը:Անհրաժեշտ է՝

-արտահայտված աջակցություն երեխայի գործունեության տեսակին, դրա համար անհրաժեշտ նյութերի տրամադրում
-բացահայտել ստեղծագործական գործունեության էությունը, բովանդակությունը, կառուցվածքը
-բացահայտել երեխաների ստեղծագործական գործունեության զարգացման հնարավորությունները կրթության գործընթացում
-բացահայտել մանկավարժական պայմանները, որոնք նպաստում են կրթության գործընթացում ստեղծագործական գործունեության զարգացմանը
-փորձնականորեն ստուգել աշխատանքի արդյունավետությունը։
Հայոց լեզվի և գրականության դասաժամերին դա հնարավոր է իրականացնել հարցաքննության, զրույցի,վերլուծական շարադրությունների միջոցով։
Նախ բացահայտվում են ստեղծագործական գործունեության բաղադրիչները և որոշվում դրա զարգացման մակարդակները։Այնուհետև դրանք հիմնավորվում և փորձնականորեն հաստատվում են:

Սովորողների ստեղծագործական գործունեության կառուցվածքը բաղկացած է մոտիվացիոն, բովանդակային-գործառնական և հուզական-կամային բաղադրիչներից.։Կրթության գործընթացում երեխաների մանկավարժական ուղղորդումն ուղղված է նրանց զարգացմանը, և նրանց ներկայությունն ապահովում է սովորողների գործունեության հաջողությունը: Իսկ հաջող վերջնարդյունքի համար անհրաժեշտ է գործունեության տեսակի կամավոր ընտրություն, դրա համար անհրաժեշտ նյութերի ապահովում, հուզական աջակցություն։ Պատահական չէ, որ ստեղծագործական կարողությունների ձևավորման հետ կապված խնդիրները դիտարկվում են փիլիսոփայության, մանկավարժության և հոգեբանության կողմից:

Ստեղծագործական գործունեության զարգացման գործընթացի արդյունավետությունը հնարավոր է հետևյալ պայմաններում,այն է՝

- ուսուցչի կողմնորոշումը յուրաքանչյուր երեխայի ստեղծագործական ներուժի զարգացմանն իր ընտրած գործունեության ոլորտում, որն իրականացվում է աշխատանքի ձևերի և մեթոդների հատուկ ընտրության միջոցով

- երեխայի ստեղծագործական գործունեության նկատմամբ ընտանիքի դրական վերաբերմունքի ապահովումը, որն արտահայտվում է ի աջակցություն երեխայի գործունեության տեսակի կամավոր ընտրության, դրա համար անհրաժեշտ նյութերի տրամադրման, նրա հաջողության համար հուզական աջակցություն ստանալու միջոցով:

Հայոց լեզվի և գրականության դասերին ստեղծագործական ճանաչողական գործունեության զարգացման գործում հսկայական դեր է տրվում դասագրքի հետ աշխատանքին: Դասագիրքը կազմակերպում է սովորողների ճանաչողական գործունեությունը, համակարգում գիտելիքները, ձևավորում ուղղագրական հմտություններ, զարգացնում խոսքը, նպաստում բարոյական և գեղագիտական դաստիարակությանը: Դասագիրքը պարունակում է առաջադրանքներ, որոնք զարգացնում են տրամաբանելու, ապացուցելու, համեմատելու, եզրակացություններ անելու կարողությունը:Հայոց լեզվի դասերին շատ ժամանակ է հատկացվում սովորողների ինքնուրույն աշխատանքին: Դրա համար օգտագործվում են նաև առաջադրանքներ, որոնք թույլ են տալիս ոչ միայն ստուգել գիտելիքները լուսաբանված նյութի վերաբերյալ, այլև հնարավորություն ունեն անընդհատ կրկնել ուսումնասիրված նյութը, ուսումնասիրել ժամանակից շուտ: Դասարանում ճանաչողական գործունեության զարգացման գործում մեծ նշանակություն ունեն հանելուկները, ասացվածքները, խաղերը, բանաստեղծությունները: Այս բոլոր ձևերն օգնում են երեխաների մտածողության, հնարամտության, երևակայության զարգացմանը, հարստացնում են երեխաների խոսքն ու հիշողությունը: Դասերում հանելուկները օգտագործվում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ձևով տարրական դպրոցի հայոց լեզվի ծրագրում ուսումնասիրված տարբեր թեմաներով: Առաջադրանքները կարող են շատ տարբեր լինել: Ցանկացած տեսակի աշխատանքում հանելուկները, ասացվածքները, առածները հուզական ազդեցություն են ունենում երեխաների ճանաչողական կարողությունների զարգացման վրա, ինչը դրականորեն ազդում է նրանց գիտելիքների, հմտությունների և կարողությունների վրա: Այս ամենը

հնարավորություն է տալիս երեխաներին հետաքրքրել ուսումնասիրվող նյութով՝

հարստացնելով բառապաշարը և ձևավորելով գրելու գիտակցված հմտություն և դժվար բառերի ճիշտ օգտագործում բանավոր և գրավոր խոսքում:Հեքիաթների դասեր անցկացնելը հնարավոր է երկու տարբերակով, երբ հիմք է ընդունվում ժողովրդական կամ գրական հեքիաթը, երկրորդը կազմում է հենց ուսուցիչը: Հեքիաթի ձևը մոտ և հասկանալի է հատկապես փոքր և միջին տարիքի երեխաների համար, բայց ավագ դպրոցի աշակերտները հետաքրքրությամբ են արձագանքում նման դասին։

Այսպիսով, ելնելով վերը նշվածից,կարող ենք եզրակացություններ անել երեխաների ճանաչողական գործունեության զարգացման կարևորության մասին և շեշտել,որ դրա համար անհրաժեշտ նախադրյալներն են՝

1. Դասին դրական մոտիվացիայի ստեղծում.

2. Տեղեկատվության իմաստային վերլուծության ակտիվ և ինտենսիվ աշխատանքի ապահովում.

3. Իմաստային կռահման մշակում և աշակերտի բառապաշարի փորձի ակտիվացում, բառապաշարի հարստացում.
4.Ուշադրության օպտիմալ կազմակերպման խթանում.
5 Հիշելու ռացիոնալ եղանակներով զինում.
6. Տեղեկատվության ընկալման անհրաժեշտ տեմպի զարգացում.
7. Աշխատանքի տեմպի բարձրացում.
8. Տեղեկատվական տարածքի, դասի բովանդակության զարգացում։

4.Եզրակացություն:

Այսպիսով,կարող ենք եզրակացնել,որ սովորողների մեջ ինքնուրույնության,նախաձեռնության,ստեղծագործական կարողությունների ձևավորումն ու զարգացումը կրթության կարևոր բաղադրիչներից են:Ինքնուրույնությունը մանկավարժության մեջ հասկացվում է որպես անձի առաջատար հատկություններից մեկը, որն արտահայտվում է որոշակի նպատակ դնելու, դրա իրականացմանը ինքնուրույն հասնելու ունակությամբ, պատասխանատու վերաբերմունք ցուցաբերելով նրանց գործունեությանը և գործելու գիտակցաբար և ակտիվորեն, ոչ միայն ծանոթ միջավայրում, նաև նոր պայմաններում, որոնք պահանջում են ընդունել ոչ ստանդարտ լուծումներ: Ինքնուրույնությունը՝ որպես անձնական հատկություն, մարդուն տրված չէ ծնունդից, այլ ձևավորվում է երեխայի մեծանալուն պես:

Ուսուցման մեջ ինքնուրույնությունն առանձնահատուկ նշանակություն ունի, որտեղ այն ամենավառ արտահայտությունն է գտնում սովորողների ինքնուրույն աշխատանքի գործընթացում: Այստեղ շեշտը դրվում է աշակերտի ինքնագործունեության, հետաքրքրասիրության, ակտիվության զարգացման , երեխայի անհատական փորձի վրա: Ուսուցիչը չպետք է երեխային պարտադրի իր հայացքները, համոզմունքները, պատրաստի կանոնները: Անհրաժեշտ է խրախուսել սովորողին լինել ակտիվ և անկախ՝ անուղղակիորեն ազդելով աշակերտի վրա շրջապատի, շրջակա միջավայրի միջոցով: Կարևոր է երեխաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտությունը:Կ.Դ. Ուշինսկին նշել է, որ մանկավարժը պետք է աչալուրջ տարբերակի համառությունը, քմահաճույքը և ազատ գործունեության անհրաժեշտությունը, որպեսզի չճնշի երեխային[2] : Երեխաների ստեղծագործական գործունեության զարգացումը նպատակաուղղված է գիտակցական կյանքում ստեղծագործելու նրանց նախապատրաստման խնդիրների լուծմանը և ենթադրում է սովորողների ներգրավում գեղարվեստական, գեղագիտական, սպորտային և ժամանցի,

2.Տե՛ս Կ. Դ. Ուշինսկի,Մարդը որպես դաստիարակության առարկա ,1868,էջ 237:

բնապահպանական, կենսաբանական, զբոսաշրջության ոլորտներում:

Նախաձեռնողականությունը նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է: Մի բան է տարաբնույթ մտքեր ունենալ,մեկ այլ բան՝ այդ մտքերը զարգացնելն ու կյանքի կոչելը՝ ձեռնարկելով հստակ քայլեր: Սա բավականին բարդ գործընթաց է, որում սովորողներն անկասկած բախվում են հազարավոր խոչընդոտների: Սակայն նախաձեռնողականության հետ սերտ կապված խրթին ուղին ունի մի շարք դրական կողմեր: Այն մեկ հարթության վրա է բերում տարբեր մարդկանց՝ միավորելով նրանց հանուն մեկ գերագույն նպատակի: Գրեթե անհնար է ինչ-որ բան ամբողջովին մենակ նախաձեռնել:Նախաձեռնողականությունն իր մեջ է կրում մարդկանց միավորման և մեկ ամբողջական թիմի վերածման խորհուրդը: Նախաձեռնողականությունն է այն շարժիչ ուժը, որն առաջ է մղում ամեն մի նոր միտք դեպի իրականություն: Այն հանգեցնում է դրական տեղաշարժի՝ երկրագնդի անդադար շարժին զուգահեռ:

Ստեղծագործական անհատականության զարգացումը, որը պատրաստ է սոցիալական նշանակալի գործառույթների իրականացմանը, սոցիալական փոխակերպման գործունեությանը, դառնում է ժամանակակից հասարակության էական խնդիրներից մեկը: Ստեղծագործական անհատականության զարգացման խնդիրը մենք դիտարկում ենք աճող մարդու իրական կարողությունների զարգացման համատեքստում, որոնք ձևավորվում և մարմնավորվում են տարբեր տեսակի ճանաչողական և ստեղծագործական գործունեության մեջ: Այս գործունեության արդյունքը միշտ չէ, որ ակնհայտ սոցիալական արժեք ունի, սակայն դրա գործընթացին մասնակցությունը երեխաների համար առաջնային նշանակություն ունի: Այս գործընթացի ընթացքում ի հայտ են գալիս նախաձեռնողականություն, ինքնուրույնություն, բացահայտվում է անհատի ստեղծագործական ներուժը:Յուրաքանչյուր երեխա ունի կարողություններ և ունակություններ: Երեխաները բնականաբար հետաքրքրասեր են և սովորելու ցանկություն ունեն: Որպեսզի նրանք ցույց տան իրենց կարողությունները, անհրաժեշտ է պատշաճ առաջնորդություն:

5.Օգտագործված գրականության ցանկ:

1. Նեմով Ռ.Ս., Հոգեբանություն, Գիրք 2 ,1998։

2. Կ. Դ. Ուշինսկի,Մարդը որպես դաստիարակության առարկա ,1868։

3.Անձի ինքնիրացման հիմնախնդիրը: Ուսումնական ձեռնարկ / Վ. Ռ. Պապոյան, Է. Ա. Գրին, Ա. Ս. Գալստյան և ուրիշներ, -Եր.: ԵՊՀ հր., 2011։

4.Ա.Վ. Պետրովսկի,Ընդհանուր հոգեբանություն , Ե., 1974։